ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ Ը

Հայցադիմումը վարույթ ընդունելու և դատական նիստ նշանակելու մասին

27.09.2022թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանս, քննության առնելով «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի՝ ի դեմս լիազոր ներկայացուցիչ Լևոն Օհանյանի, ներկայացրած հայցադիմումն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 30.07.2019 թվականին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑԻ

«Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ն՝ ի դեմս լիազոր ներկայացուցիչ Լևոն Օհանյանի, 22.09.2022թ.-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 30.07.2019 թվականին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Գտնում եմ, որ հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ, 234.5.-րդ հոդվածների պահանջներին, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ:

Միևնույն ժամանակ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է հրավիրել դատական նիստ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5.-րդ, 234.6.-րդ և 234.9. հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի՝ ի դեմս լիազոր ներկայացուցիչ Լևոն Օհանյանի, ներկայացրած հայցադիմումն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 30.07.2019 թվականին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և նշանակել դատաքննության 2022թ. հոկտեմբերի 31-ին, ժամը 12^{00}-ին, ք. Երևան, Մ. Խորենացի 162ա հասցեում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՎԱԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**